Նարեկ Տեր-Օհանյան
Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի դասախոս

ՔՐԵԱՀԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԻԺՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆՈՐ ՆԱԽԱԳԾԻ

Սույն գիտական հոդվածը նվիրված է ՀՀ քրեական օրենսգրքի նոր նախագծում սահմանված պատժատեսակներին և դրանց առանձնահատկություններին: Դրանում կատարված են նոր պատժատեսակների վերլուծություններ, որոնք ուղղված են ՀՀ-ում պետության կողմից իրականացվող կազմակերպական-կառավարչական, քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ փոփոխությունների արտացոլմանը քրեահիրավական հարաբերություններում:

Հիմնաբառեր. պատժատեսակներ, տուգանք, պետական պաշտոնից զրկում, վտարում, կարճաժամկետ ազատազրկում, ցմահ ազատազրկում:

Պատիժը հաջորդում է քրեական իրավունքի առաջին հիմնական ինստիտուտին՝ հանցագործությանը: Այլ խոսքով՝ պատիժը հանցագործության իրավական հետևանքն է:

Գրականության մեջ իրավացիորեն նշվում է, որ քրեական պատիժը պետության արձագանքն է անձի կողմից կատարված հանցագործության նկատմամբ, իսկ հանցագործի համար այն իր կողմից կատարված հանցագործության քրեահրավական հետևանքն է[1]:

Հանցագործությունների համար արդարացի պատժի նշանակումն անհրաժեշտություն է, սակայն դա պայքարի միջոցներից սոսկ մեկն է:

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի համաձայն պատիժը պետական հարկադրանքի միջոց է, որը դատարանի դատավճռով պետության անունից նշանակվում է հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ, և արտահայտվում է այդ անձին իրավունքներից ու ազատություններից օրենքով նախատեսված զրկմամբ կամ դրանց սահմանափակման ձևերով:

Վերը նշված սահմանումից բխում է, որ քրեական իրավունքում պատժի հատկանիշներ են համարվում՝

- քրեական հարկադրանքի միջոց լինելը,
- պետության անունից դատարանի դատավճռով նշանակվելը,
- միայն հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվելը,
- անձին իրավունքներից և ազատություններից օրենքով նախատեսված զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ արտահայտվելը:

Հանդես գալով իբրև պետական հարկադրանքի ձև՝ քրեական պատժի հատկանիշներն իրենց ամբողջության մեջ նրան տարբերակում և սահմանազատում են հարկադրանքի մյուս բոլոր ձևերից, օրինակ՝ վարչական, քաղաքացիա-

[1] Տե՛ս Наумов А.В. Российское уголовное право. Общая часть. Курс Лекций. М. 1997, էջ 358:

կան-իրավական, կարգապահական, մանկավարժական դաստիարակչական և այլ հարկադրանքներից[2]:

Պատժի խստությունը պետք է համապատասխանի հանցագործության հանրորեն վտանգավորության աստիճանին և մեղավոր ճանաչվածի անձին: Ամբողջ աշխարհում բավարար ապացույցներ չկան այն մասին, թե պատժի խստացումը կամ մեղմացումը համապատասխանաբար բարենպաստ կամ բացասական ազդեցություն կարո՞ղ է թողնել հանցագործությունների կանխարգելման գործում[3]:

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն պատժի նպատակները երեքն են՝

- վերականգնել սոցիալական արդարությունը,
- ուղղել պատժի ենթարկված անձին,
- կանխել հանցագործությունները:

Միայն արդարացի պատժի նշանակումը թույլ կտա հասնել նշված նպատակներին՝ որպես քրեական պատժի վեջնարդյունք:

Սոցիալական արդարության վերականգնումը որպես պատժի նպատակ ենթադրում է անձին, հասարակությանը, պետությանը հանցագործությամբ պատճառված վնասի՝ պատժի միջոցով հնարավորինս հատուցում, հանցագործության վտանգավորության և պատժի համապատասխանություն, միևնույն հանցագործության համար կրկին պատժելու անթույլատրելիություն և ֆիզիկական տանջանքներ պատճառելու կամ մարդկային արժանապատվությունը նվաստացնելու անթույլատրելիություն[4]:

Ինչպես նշվեց, պատժի հաջորդ նպատակը հանցանք կատարած անձին ուղղելն է: Քրեաիրավական ուղղման նպատակին հասնելու համար անհրաժեշտ է հանցավորին դարձնել օրինապահ քաղաքացի՝ բացառելով վերջինիս կողմից նոր հանցանքի կատարումը:

Պատժի առավել կարևոր նպատակը հանցագործությունների կանխումն է: Այս նպատակը մեկնաբանվում է երկու, առաջին՝ մասնավոր կամ հատուկ և երկրորդ՝ ընդհանուր կանխման ձևերով: Մասնավոր կանխումը ենթադրում է նախկինում հանցանք կատարած անձի նկատմամբ այնպիսի հարկադրանքի կիրառում, որի շնորհիվ հանցավորը հետագայում զերծ կմնա նոր հանցագործությունից: Ի տարբերություն մասնավոր կանխման՝ ընդհանուր կանխման էությունը հանցագործությունների կատարումից այլ անձանց զերծ պահելն է:

Այժմ քննարկման փուլում է գտնվում քրեական նոր օրենքի նախագիծը (այսուհետ նախագիծ): Այդ նախագծում պատժի սահմանումն ու նպատակներն էական փոփոխության չեն ենթարկվել: Միայն կարելի է առանձնացնել պատժի նպատակներից երկրորդը, որը վերաշարադրվել է որպես պատժի ենթարկված անձի վերասոցիալականացում: Անձին ուղղել կամ վերասոցիալականացնել եզրույթներն, ըստ էության, նույն բովանդակությունն ունեն և երկուսն էլ ենթադրում են դատա-

[2] Տե՛ս Թովմասյան Ա.Թ., Սովետական քրեական իրավունք, հատոր 2, Երևան 1979, էջ 7:

[3] Տե՛ս А. З. Жалипский Социально-правовое мышление: проблемы борьбы с преступностью. М 1989, էջեր 29-30:

[4] Տե՛ս Առաքելյան Ս.Վ., Գաբուզյան Ա.Հ., Խաչիկյան Հ.Մ., Ղազինյան Գ.Ս., Մաղաքյան Ն.Ս., Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս, /վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով/, Երևան 2012, էջ 380:

պարտյալի մեջ իրավական ու բարոյական նորմերի նկատմամբ հարգանքի սերմանում:

Ի տարբերություն պատժի սահմանման և նպատակների, պատժի համակարգն էական փոփոխության է ենթարկվել նախագծում:

Պատժի համակարգը նրա տեսակների սպառիչ ցանկն է, որը սահմանվում է քրեական օրենքով: Այդ ցանկը սահմանված է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 49-րդ հոդվածով, ըստ որի պատժի տեսակներն են՝

1) տուգանքը,
2) որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը,
3) հանրային աշխատանքները,
4) հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելը,
4.1) զինվորական ծառայության մեջ սահմանափակումը,
5) գույքի բռնագրավումը,
6) կալանքը,
7) կարգապահական գումարտակում պահելը,
8) ազատազրկումը որոշակի ժամկետով,
9) ցմահ ազատազրկումը:

Նախագծում պատժի համակարգը սահմանված է նոր՝ 58-րդ հոդվածով, որտեղ այն ունի հետևյալ հաջորդականությունը և բովանդակությունը՝

1) հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից, որակավորման դասից կամ պետական պարգևից զրկելը,
2) տուգանքը,
3) հանրային աշխատանքները,
4) որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը,
5) օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելը,
6) զինվորական ծառայության մեջ սահմանափակումը,
7) ազատության սահմանափակումը,
8) կարճաժամկետ ազատազրկումը,
9) ազատազրկումը,
10) ցմահ ազատազրկումը:

Վերը շարադրված երկու հոդվածների բովանդակությունից բխում է, որ նախագծում որպես պատժատեսակ նույնությամբ պահպանվել են տուգանքը, հանրային աշխատանքները, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, զինվորական ծառայության մեջ սահմանափակումը և ցմահ ազատազրկումը: Հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելը պատժատեսակում ներառվել է նաև պետական պարգևից զրկելը, իսկ որոշակի ժամկետով ազատազրկումը վերանվանվել է ազատազրկում:

Նախագծի պատժատեսակներից անկում չկան գույքի բռնագրավումը, կալանքը և կարգապահական գումարտակում պահելը: Փոխարենն ավելացել են

օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելը, ազատության սահմանափակումը և կարճաժամկետ ազատազրկումը: Այս երեք նոր պատժատեսակներից կարճաժամկետ ազատազրկումը նման է ներկայիս օրենքով որպես պատիժ կիրառվող կալանքին: Թե՛ կալանքը և թե՛ կարճաժամկետ ազատազրկման էությունը դատապարտյալին ուղղիչ հիմնարկում անազատության մեջ պահելու ձևով հասարակությունից խիստ մեկուսացման պայմաններում պահելն է: Երկու պատժատեսակներն էլ կարող են նշանակվել ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների համար, սակայն, ի տարբերություն կալանքի, որի ժամկետը սահմանված է տասնհինգ օրից մինչև երեք ամիս, կարճաժամկետ ազատազրկման դեպքում նվազագույն և առավելագույն սահման է համարվում տասնհինգ օրից երկու ամիս ժամկետը: Կալանքի նշանակումն ունի որոշակի սահմանափակումներ և չի նշանակվում դատավճիռը կայացնելու պահին տասնվեց տարին չլրացած անձանց կամ հղի կանանց կամ խնամքին մինչև ութ տարեկան երեխա ունեցող անձանց նկատմամբ, ինչպես նաև, եթե կալանավորումը որպես խափանման միջոց չի կիրառվել: Կարճաժամկետ ազատազրկման դեպքում նման սահմանափակումներ առկա չեն: Փոխարենը նշվում է, որ այս պատժատեսակի նվազագույն ժամկետը օրենսգրքով նախատեսված դեպքերում կարող է տասնհինգ օրից պակաս լինել, իսկ զինծառայողները կարճաժամկետ ազատազրկումը կրում են կայազորային կարգապահական մեկուսարանում: Ի դեպ, նախագծի 68-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն նվազագույն շեմից ցածր ժամկետով պատիժ կարող է նշանակվել նաև ազատազրկման դեպքում:

Օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելը որպես քրեահրավական պատժի տեսակ սահմանված է նախագծի 64-րդ հոդվածով, ըստ որի օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելը Հայաստանի Հանրապետությունում քրեական պատասխանատվության ենթակա օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության սահմաններից հեռացնելն է՝ արգելելով գտնվել Հայաստանի Հանրապետությունում: Այս պատժատեսակը համարվում է ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պատիժ: Որպես հիմնական պատիժ կարող է նշանակվել ոչ մեծ ծանրության և միջին ծանրության հանցագործությունների համար հինգից տասը տարի ժամկետով, իսկ լրացուցիչ պատժի դեպքում սահմանվում է չորսից ութը տարի: Ի դեպ, երկրորդ դեպքում պատիժ նշանակելիս դրա ժամկետի հաշվարկը սկսվում է հիմնական պատիժը կրելուց հետո: Այս պատժատեսակն ունի որոշակի սահմանափակումներ: ՀՀ տարածքից չեն կարող վտարվել՝

1. մինչև հանցանք կատարելը փախստականի կարգավիճակ կամ ՀՀ-ում ապաստան ստացած անձը,
2. պատիժ նշանակելու պահին ապաստան հայցող անձը,
3. միջազգային պայմանագրերի համաձայն՝ չվերադարձելիության սկզբունքից օգտվող օտարերկրյա քաղաքացին,
4. մինչև հանցանք կատարելը ՀՀ քաղաքացու կամ ՀՀ-ում հատուկ կացության կարգավիճակ ունեցող կամ ՀՀ-ում մշտապես բնակվող անձի հետ ամուսնացած կամ խնամքին ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխա ունեցող անձը:

Օտարերկրյա քաղաքացուն ՀՀ տարածքից վտարելը կարող է նշանակվել այն դեպքում, երբ դատարանը, ելնելով հանցավորի անձը բնութագրող առանձնահատկություններից և նրա կատարած հանցանքի բնույթից, հնարավոր չի համարում ՀՀ տարածքում նրա գտնվելը:

Նախագծի հոդված 65-ով սահմանվում է ազատության սահմանափակում, որը դատապարտյալին առանց ուսումնառությունից կամ աշխատանքից կտրելու տնային պայմաններում հսկողության տակ պահելն է: Այս պատժատեսակը նշանակվում է ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար վեց ամսից երեք տարի ժամկետով: Դատարանը ազատության սահմանափակում նշանակելով, արգելում է հանցանք կատարած անձին այցելել տարբեր ժամանցային կամ այլ հաստատություններ, կազմակերպել, մասնակցել կամ այցելել որոշակի միջոցառումների, հավաքների, կամ առանց դատապարտյալի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի համաձայնության փոխել բնակության վայրը, կամ որոշակի ժամերի բացակայել տանից: Դատարանը դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ կամ առանց դրա կարող է սահմանել նաև այլ արգելքներ կամ փոխարինել դրանք: Ըստ որում, դատարանը կարող է դատապարտյալի նկատմամբ սահմանել վերը թվարկված արգելքներից միայն մեկը կամ մի քանիսը միաժամանակ: Դատարանի կողմից նշանակված արգելքները չեն կարող սահմանափակել դատապարտյալի հետ համատեղ բնակվող անձանց ազատության կամ այլ անձանց հետ շփվելու իրավունքը: Որոշակի ժամերի տանից բացակայելու արգելքը չի կարող պակաս լինել օրական ութ և չի կարող ավելի լինել օրական տասներկու ժամից: Ազատության սահմանափակումը չի կարող նշանակվել ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողների նկատմամբ:

Պետք է նշել, որ այս հոդվածով նախատեսված պատժից դատապարտյալի խուսափելու դեպքում այն փոխարինվում է կարճաժամկետ ազատազրկմամբ կամ ազատազրկմամբ՝ ազատության սահմանափակման երկու օրը հաշվարկելով կարճաժամկետ ազատազրկման կամ ազատազրկման մեկ օրվա դիմաց:

Ազատության սահմանափակումը կարճաժամկետ ազատազրկմամբ կամ ազատազրկմամբ փոխարինելիս կարճաժամկետ ազատազրկման կամ ազատազրկման ժամկետը չի կարող գերազանցել այն հոդվածի սանկցիայով տվյալ պատժատեսակների համար նախատեսված առավելագույն ժամկետը, որով նախատեսված հանցագործության համար անձը դատապարտվել է: Եթե հաշվարկի հետևանքով կարճաժամկետ ազատազրկման կամ ազատազրկման ժամկետը պակաս է ստացվում այն հոդվածի սանկցիայով տվյալ պատժատեսակի համար նախատեսված նվազագույն ժամկետից, որով նախատեսված հանցագործության համար անձը դատապարտվել է, ապա պատիժը նշանակվում է հաշվարկի հետևանքով ստացված ժամկետի չափով:

Նախագծում առկա միտումներից մեկն ուղղված է ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող միջոցների ներդրմանն ու դրանք կիրառելուն: Քրեաիրավական հարկադրանքը պետք է ուղղված լինի հանցանք կատարող անձի ուղղմանը, նրա վերասոցիալականացմանը, հանցագործությունների կանխարգելմանը: Նոր նախատեսվող այլընտրանքային միջոցները թույլ են տալիս լավագույնս ապահովելու այս նպատակները: Բացի այդ, դրանք թույլ են տալիս տնտեսելու քրեաիրա-

վական հարկադրանքը, հասարակական հարաբերությունները զերծ պահելու ավելորդ քրեականացումից:

Անհրաժեշտ է ընդգծել, որ հանցավորության դեմ պայքարում պատիժը գլխավոր միջոցը չէ: Պատիժը երկրորդական է հանցագործության, հանցավորության և դրանց պատճառների նկատմամբ: Հանցավորության դեմ պայքարում հիմնական նշանակություն են ստանում պետության կողմից իրականացվող տնտեսական, քաղաքական, կազմակերպական-կառավարչական միջոցները[5]: Քրեական օրենսգրքի նոր նախագիծը, մեր կարծիքով, համապատասխանում է վերը առաջադրված պահանջներին:

[5] Տես՝ Գրիգորյան Մ., Քրեական իրավունքի ընդհանուր մաս, /երկրորդ՝ լրացված վերահրատարակություն/, Երևան 2007, էջ 353:

Нарек Тер-Оганян
Преподаватель юридической кафедры Международного университета Евразия

УГОЛОВНО-ПРАВОВЫЕ НАКАЗАНИЯ В НОВОМ ПРОЕКТЕ УГОЛОВНОГО КОДЕКСА РА

Данная научная статья посвящена видам наказания и их особенностям, определенным в новом проекте уголовного кодекса РА. В нем дан анализ новых видов наказаний, которые направлены на осуществляющиеся со стороны государства организационно-управленческие, политические, экономические, культурные и другие отражения перемен в уголовно-правовых отношениях в РА.

Ключевые слова: виды наказаний, штраф, лишение государственной должности, депортация, кратковременное лишение свободы, пожизненное заключение.

Narek Ter-Ohanyan
Lecturer of the Law Department at Eurasia International University

CRIMINAL LEGAL PENALTIES UNDER THE NEW CRIMINAL CODE DRAFT OF THE REPUBLIC OF ARMENIA

The article touches upon the penalties and peculiarities of the Criminal Code new draft of the Republic of Armenia. The analysis of new types of sanctions is aimed at reflecting the organizational, administrative, political, economic, cultural and other changes carried out by the state in the criminal justice system.

Key Words: penalties, fine, deprivation from public office, deportation, short-term imprisonment, life sentence.